

# ՄԵՐԿԱՑՆԵԼ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆԱՅԻՈՆԱԼԻՍՏԱԿԱՆ ՖԱԼՍԻՖԻԿԱՑԻԱՆ

Արդեն բավական ժամանակ է, վոր հրապարակի վրա յե զտնվում Յերվանդ Շահադիդի «Հին Յերևանը» աշխատութիւնը, սակայն մինչև այժմ այն չի յենթարկվել մերկացնող քննադատութիւնի:

Հին Յերևանի պատմութիւնն համառոտ ուրվագիծը տալու հավակնութիւն ունեցող հեղինակը, փաստորեն Փալսիֆիկացիայի յե յենթարկում պատմական իրողութիւնները և փաստերը: Պատմական Յերևանն ամենից առաջ ընթերցողներին ներկայացվում է վորպես հայտու իսաղաղ կյանքով ապրող մի յերջանիկ ավան, վորտեղ չեն յեղել դասակարգային հակասութիւններ, սոցիալական պայքար:

Սաղաղ անդորրութիւնը, հեղինակի կարծիքով խախտվել է միայն պատերազմների և քաղաքի համար միակ չարիքը հանդիսացող վաշխառուների պատճառով, իսկ Յերևանի յամենին ու բեզերը յեղել են շինարարներ, մաշհոզված քաղաքի բարեկարգութեամբ և շինարարութեամբ:

Պատմական արխիւների և իր մըշուչապատ յերևակայութեան միջով հեղինակը զիտելով Յերևանի անցյալի պատմութիւնը, բոլորովին պատահական կերպով չէ, վոր նա կործ է անում համեմատել հին Ֆեոդալական Յերևանը մեր ներկա ծաղկող սոցիալիստական Յերևանի հետ և համարյա վոչ մի տարբերութիւն չի տեսնում:

Աղավաղելով պատմական իրականութիւնը, հեղինակը չարամտորեն անց է կացնում իր թթու շովինիստական - ոսասյական հայացքները հարևան ժողովուրդների նկատմամբ: Նրա կարծիքով թյուրք ժողովուրդը միշտ յեղել է կովարար, մոլեռանդ ամբոխ, վորից հայերն աշխատել են խուսափել, վորպեսզի տեղի չտան նրանց մոլեռանդութիւնից ծաղող ընդհարումներին:

Հեղինակն իր շովինիստական-ոսասյական հայացքների կոնդրարանդան անցկացնելու համար հորինել և կեղծ փաստեր, վորտեղ խոսեցնելով հենց իրենց թյուրքերին՝ ցանկանում է ապացուցել, վոր «թուրքերն ինքրան ուտում են քրիստոնեաների միսը և խում նրանց աբլունը, բայց ասում են, թե քրիստոնեաների մորթածը մի ուտեք, վորովհետև մեղք ես»:

Այնպիսով ամեն մի եջում յերևան են գալիս հեղինակի ոհակցիոն կղերական հայացքները՝ կաթողիկոսների և յեպիսկոպոսների ջատագովում, վորպես հայ ժողովրդի բարեկամների և պաշտպանների: Ավելին, հեղինակը խոսելով ներսեսաշտարակեցու մասին, բացահայտորեն կեղծելով պատմութիւնը, զրտնում է, վոր ցարական կառավարութեան ներկայացուցիչ կրասովսկին նույնպէս մտահոգված եր հայ ժողովրդի պաշտպանութեան հոգսով:

Յարական նվաճողական, գալթողական քաղաքականութիւնը հեղինակի մոտ վարագուրվում է ցարական կառավարութեան կողմից քրիստոնեաներին պաշտպանելու ինչ վոր ցանկութեամբ, — մի տեսակետ, վոր պաշտպանել են հայ բուրժուական պատմարաններն ու հրապարակախոսները:

Հին Յերևանի պատմութիւնը տալու պատրվակի տակ հեղինակը վերադնահատման է յենթարկում հայ ժողովրդի ամբողջ պատմութիւնը և բուն կերպով հանում այն յեզրակացութիւնը, թե հայերը միշտ հայադավան լինելով, նրա տարբեր դասակարգերը յերբեք հակամարտ չեն յեղել: Աղանդավորական շարժումները, վորոնք մեր իրականութեան մեջ յեղել են սոցիալական պայքարի արտահայտութեան յուրահատուկ ձևեր, հեղինակի կողմից հռչակվում է վորպէս ոհակցիոն, ընդհանուր հայադավանութիւնը խախտող ուղղութիւն:

Հեղինակը մի հատուկ գլուխ է նվիրել հին Յերևանի կառավարութեան ձևին և համարհետակցական յեզրայրութիւններին, վորտեղ քննութեան յենթարկելով համարութիւնները, նրանց վորակում է վորպէս յեզրայրական միութիւններ, վորոնց մեջ վոչ մի հակասութիւն և պայքար չի յեղել:

Հարց է առջ գալիս, ո՞ւմ է պետք պատմական Յերևանի աշխարհի տղավաղված, տենդենցիոյ, շովինիստական - ոսասյական տեսութեան վրա կառուցված պատմութիւնը: Պատասխանը պարզ է՝ — ժողովրդի թշնամիներին, նացիոնալտական-դաշնակցական տարրերին: